Վերապատրաստման դասընթաց «Կատարողական վարույթի մասին օրենք: Օրենքի գործնական կիրառումը, խնդրահարույց հարցեր» թեմայով

02.10.2026 17:24

Հարգելի՛ փաստաբաններ,

05.10.2026թ. և 06.10.2026 թ., ժամը 18:30-21:30-ին ՀՀ փաստաբանների պալատը, ՀՀ փաստաբանների պալատի դահլիճում կազմակերպելու է շարունակական վերապատրաստման դասընթաց՝ բաղկացած 2 մասից՝ **«Կատարողական վարույթի մասին օրենք: Օրենքի գործնական կիրառումը, խնդրահարույց հարցեր»** թեմայով:

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ մարզերում և ՀՀ-ից դուրս բնակվող փաստաբանները, հրավիրված դասընթացին կարող են մասնակցել նաև հեռավար եղանակով, որի մասին գրանցման վերաբերյալ Ձեր նամակում ***պարտադիր անհրաժեշտ է նշել՝ Ձեր անունը, ազգանունը, արտոնագրի համարը, դասընթացի թեման և մասնակցության ձևաչափը***:

Ուշադրություն. Հաշվի առնելով հեռավար եղանակով դասընթացներին մասնակցել ցանկացողների թվաքանակը և Google meet հավելվածի միջոցով դասընթացի կազմակերպման ժամանակաբեռնվածությունը, հեռավար եղանակով դասընթացին կարող են մասնակցել գրանցված առաջին 100 անձինք:

<u>Հեռավար մասնակցության գրանցումը կատարվում է միաժամանակ դասընթացի երկու օրերի համար, միայն երկրորդ օրվա համար գրանցումները չեն դիտարկվելու:</u>

- Դասընթացը կվարեն փաստաբան Մինաս Մուրադյանը և ՀԿԱԾ Երևան քաղաքի ոչ գույքային բնույթի կատարողական վարույթների հատուկ բաժնի պետ Վարդան Մելիքբեկյանը,
- **Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ մինչև 05.10.2026թ. ժամը 10:00-ն՝ պատասխան նամակ ուղարկելով training.coordinator@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին, որտեղ անհրաժեշտ է նշել տվյալ դասընթացի թեման, Ձեր անուն, ազգանունը և արտոնագրի համարը, դասընթացի ձևաչափը,**
- **05.10.2026թ. ժամը 10:00-ից հետո և առանց դասընթացի թեմայի, անվան, ազգանվան, արտոնագրի համարի, դասընթացի ձևաչափի նշման, դասընթացին հեռավար մասնակցության համար գրանցումները չեն հաշվարկվելու,**
- Դասընթացին ամբողջությամբ մասնակցությունը կհաշվարկվի պարտադիր վերապատրաստման 8 (ութ) ակադեմիական ժամ, իսկ մեկ օրվա մասնակցության դեպքում՝ 4 (չորս) ակադեմիական ժամ:

Հեռավար դասընթացը կանցկացվի Google meet հավելվածի միջոցով, որի մասնակցության հրավերը կստանաք ձեր էլեկտրոնային փոստի հասցեին՝ գրանցվելուց հետո մինչև 05.10.2026 թվականը ժամը 17:30-ը:

Միաժամանակ խնդրում ենք հարթակին միանալիս նշել Ձեր անունը, ազգանունը և արտոնագրի համարը՝ Ձեր մասնակցությունը հաշվառելու և հարթակում շփվելու համար:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })